



«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն

Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,

E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

04.07.2017

ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզայանին


Հարգելի պարոն Գյոզայան,

«Հետք» թերթը հողված է պատրաստում հանրապետության դպրոցներում ուսուցչի թափուր հաստիքների վերաբերյալ, ինչի համար խնդրում եմ տրամադրել **Արագածոտնի մարզի դպրոցներում ուսուցչի թափուր հաստիքների ցանկը՝ նշելով դպրոցի և հաստիքի անվանումը (դասավանդման առարկան):**

Խնդրում եմ տեղեկացնել.

- 1) Թափուր հաստիքներից որո՞նք են լրացվում այլ մասնագետի միջոցով (ենթադրենք՝ ֆիզիկայի ուսուցիչը դասավանդում է մաթեմատիկա կամ այլ օրինակ):
- 2) Ի՞նչ հաճախականությամբ և ընթացակարգով են մրցույթներ հայտարարվում թափուր հաստիքները լրացնելու համար:
- 3) Հաստիքներից որո՞նք այս պահին չեն կարող լրացվել՝ բյուջեի սղության պատճառով (խնդրում եմ նշել հաստիքի անվանումն ու դպրոցը):
- 4) Թափուր հաստիքներից որո՞նք են լրացվում այլ ծրագրերի միջոցով (օրինակ՝ «Դասավանդիչի Հայաստան» և այլն). խնդրում եմ նշել հաստիքի անվանումը և դպրոցը:

Հարգանքով՝ «Հետք» թերթի լրագրող Մարինե Մաղաթյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51

0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51

0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

N

ի պատասխան Ձեր՝ 04.07.2017թ. գրության

<<Հետաքննող լրագրողներ>>


հասարակական կազմակերպության

<<Հետք>> թերթի լրագրող Մ.Մադաթյանին

Տեղեկացնում ենք, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի թափուր պաշտոննորը համալրվում են համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 15.04.2013թ. N396-Ն հրամանով հաստատված կարգի, իսկ դպրոցների բյուջեների սղության պատճառով թափուր աշխատատեղեր չկան:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ Արագածոտնի մարզի Արուճի և Շենավանի միջնակարգ դպրոցներում <<Դասավանդիր Հայաստան>> ծրագրի միջոցով համալրվել են կենսաբանություն, քիմիա, պատմություն և հասարակագիտություն առարկաների ուսուցիչների թափուր հաստիքները:

Հարգանքով՝

 /Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ